

գրողը, ինչպէս քնարերգակ-բանաստեղծ մըն է Միշէն, Ֆրանսական յեղափոխութեան մեծ պատմադիրը, որ պրպտեր, ուսումնասիրեր է արշիվները ոչ նուազ սիրով ու եռանդով, քան Թէն մը, Սօրէլ մը, բայց որ դրեր է իր պատմութիւնը պերճ ու դիւթիչ ոճով մը, դարձուցեր է գուտ պատմական աշխատութիւնը չքնադ վէպ մը, որ դեռ այսօր ալ, 100 տարի յետոյ, երախտազէտ սերունդները կը կարդան խանդավառութեամբ...

Միշէնի պէս՝ մեր մեծ գեղարուեստագէտն ալ լաւ էր հասկցեր, որ գրուածքի մը ձեւը ոչ նուազ կարեւոր է, քան անոր խորքը: Միշէնի պէս՝ նա լաւ էր ըմբռներ խօսքի մոգական ոյժը: Սօսք կայ, որ ինքնին գործ մըն է: Սօսք կայ, որ հիպնոզի անբացատրելի կարողութեամբ օժտուած, կը քարչէ, կը դիւթէ մարդկանց, կը տարրալուծէ, կը դարձնէ հողիները եւ դէպի գո՛րծ կը մղէ զանոնք...

Բաֆֆիի խօսքը անոնցմէ է: Ի՛նչ ահարկու կարողութիւն, ի՛նչ կախարդիչ հմայք: Որքա՞ն հօր ու անդիմադրելի է խօսքի հիպնոզը վէպի ու պատմական գրուածքներու մէջ, հրապարակախօսական մարզանքներում: Որքա՞ն ազդու են բաֆֆիական լախտի հարուածները իր բազմապիսի հակառակորդներուն վերայ:

Սօսքի վարպետ մը: Ոճի իշխա՞ն մը: Իր ժամանակին — միակ իշխանը, անտարակոյս, անդուգական եւ անմրցակից:

Արտաքին թշնամիներու եւ ներքին ցեցերու հանդէպ՝ նա մարմնացած ցատումն է եւ ահարկու խարազան մը: Եւ ատոր համեմատ՝ իր խօսքը թոյն ու կրակ կը ժայթքէ, մի այնպիսի կատաղութեամբ, որպիսին չէք գտնի երբեք իր նախորդներու եւ ժամանակիցներու — Նադարեանի, Նալբանդեանի, Շահազիզի, Մերենցի, Արծրունիի եւ բոլոր Արծրունիներու գրուածքներում:

Պատմական անցքերը ցուցադրելիս, հայոց պատմութեան փոթորկալոյց գրուածքները նըկարագրելիս — գրուածքներ՝ լուսաւոր եւ մըռուայլ, ուրախ ու վշտալից, գուռ, հերոզական, ողբերկիչ ու վտահեցուցիչ — Վարպետի խօսքը, բարձր պաֆօսի մէջ, նիւթին համեմատ,

կը ստանայ վեհ ու տրամադիկ հանդիսաւորութիւն մը...

Կարդացէ՛ք այս քանի մը կտորները «Սամուէլ»էն. Մերուժան ուրացողը իր ազգակործան ոճիրներէն յետոյ կ'ուղչ վերադառնալ իր հայրենական օճախը.

... «Մի սպիտակ ձիաւոր, շրջապատուած մի խումբ քիկնապահներով, անդադար արշաւում էր խռովեալ քաղաքի մը փողոցից դէպի միւսը, անցնում էր կրակների միջով... առանց ամենափոքր երկիւղ կամ վտանգ զգալու... Իր փառասիրութեան չափ փառահեղ էր ստեղծել նրան բնութիւնը, իսկ իր անգուսպ անցքութեան չափով — սոսկալի: Նրա տռեմալին ասորական արիւնը խառնուելով հայկականին եւ Ջայ-մար ամրոցի վիշապազունների արեան հետ, տուել էին նրա հօր կազմուածքին վիշապի ահաւորութիւն: Նայն ահաւորութեան մէջ նա գեղեցիկ էր եւ վայելչապատ, որքան գեղեցիկ էլ լինում հագէտա Սադայէլը: Իր պղնձեայ ամրակուռ գրախառքութեան մէջ իւր գեմքերի շողշողուն փայլով, հրդեհների վառ ցառագայթների առջեւ փայլում էր նա, իւր անուան համեմատ, որպէս մի արեգակ լուսապայծառ, որ աչք էր շլացնում:

Ամէն տեղ, ուր եւ յայտնվում էր նա, լըռում էր աղմուկը, դադարում էր խռովութիւնը: Բայց հէնց որ անցնում էր, նրա ետեւից լսելի էին լինում անէծքի խուլ մրմուռներ: Իր սեպիական քաղաքացիք նզովում էին նրան: Բայց կար ժամանակ... երբ նա անցնում էր այդ քաղաքի փողոցներով, մանկահասակ աղջիկները ծաղիկներ էին սփռում նրա սպիտակ նժոյգի ոտների ներքոյ, իսկ կանայք օրհնութեան ներբողներ էին երգում...

... Գնում էր Մերուժան Արծրունին դէպի իւր նախահարց Ոստանը — իշխանական մայրաքաղաքը — Հաղամակերտ: Նա սպասում էր, որ իւր քաղաքացիք կը դիմաւորեն իրան, այդ անապարհի աջ եւ ահեակ կողմերը ծածկելու կը լինի արանց եւ կանանց խումբերով եւ բազմութիւնը ցնծութեան աղաղակներով ու նուագարանների հնչիւններով կը տանէ նրան մինչեւ իր իշխանական ապարանքը: Բայց ոչ ոք չյայտնուեցաւ:

... Վերջապէս հասաւ նա քաղաքադռն-